

733

124

611.31

U-34

611.31

Մ-34

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԶՐՈՅՑՆԵՐ

124

ԱՏԱՄՆԵՐ

Նոցա ցուելու պատճառները,
ինչպէս առաջն առնել և ա-
ռողջապահութիւնը:

Գրեց Մ. Մ. Մարգարեանց

Ասամի բժիշկ Նրեանցում:

2002

Ե Ր Ե Ի Ա Ն

Տպ. Այվազեանց և Նազարեանց

1907.

2010

611.31 u v
n^o - 34

16089

ԱՏԱՄՆԵՐ

ԵՒ ՆՈՅԱ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՊԱՏ- ՃԱՌՆԵՐԸ:

Մեր մարմնի իւրաքանչիւր անդամ կատարելով իւր դերը օգուտ է բերում ամբողջ կազմուածքին. մէկի կամ միւսի անգործութիւնից վնասը անխուսափելի է. պարզ է որ ատամները, որոնք անհրաժեշտ են ուտելիքի մարման գործում, շատ օգտաւէտ են:

1608
37899

Ձեզ քաջ յայտնի է, որ մեր նախորդները աւելի քիչ են ատամնացաւ քաշել և զրկուել ատամներից, քան այժմայնոր սերունդը: Եւ շատ անգամ հիւանդներիցս լսել եմ այս հարցը թէ ինչո՞ւ այժմ ատամնացաւը աւելի է տաքածւած քան առաջ էր:

Զարմանալու ոչինչ չկայ, ում յայտնի չէ, որ մեր նախնիքը աւելի հասարակ կեանք էին վարում, մտաւոր աշխատանք քիչ ունէին, հոգս չունէին և քիչ էին փչացնում իրենց կազմուածքը, ուստի և ամբողջ կազմուածքի հետ ունէին և ամբողջ ատամներ:

Օրինակ դիւղացիք. նոքա աւելի հասարակ կեանք են վարում, ուստի ամբողջ են և ատամնացաւ քիչ են քաշում, քան նոքա՝ ուղիւս ամեն օր կուլ են տալիս քաղաքի խեղդեղած մթնոլորտի փշանալը, քաղաքացւոց ատամների փշանալը, քաղաքում և քաղաքում նոր եփած սպիտակ ալյուր, շաքար, ծամանակ կանոնաւոր չի ծամւում և քիչտ համարեալ մնում է:

ատամների արանքում. թէ դա որքան ֆլասակար է ու քայքայիչ ատամների համար, շուտով կը բացատրեմ:

Ձեզ անհրաժեշտ է գիտենալ, որ ատամը բաղկացած է արտաքին կարծր սպիտակ փայլուն մասից արծնապակուց-էմալից: Էմալի տակ գտնւում է աւելի թոյլ ոսկրային մասը, որը եւրոպական լեզուով կոչւում է դէնտին—ատամնոսկր: Ատամնոսկրի մէջ գտնւում է փոքրիկ խոռոչ կամ խողովակ՝ ատամի ձեւի համապատասխան, որի մէջ տեղաւորւած է ատամնախիւսը—պուլպան (pulp) ժողովրդական լեզուով «ատամի նեարդ» (зубной нерв): Ով որ հետաքրքրւել է նոր հաճաճ ատամը կոտրել, որի նեարդը դեռ ևս չէ ոչնչացած, անպատճառ տեսած կը լինի սպիտակ թել, որը ձգւում է մինչև գլուխը, ինչպէս հեռագրաթելը՝ գլխաւոր կայարանը: Այս սպիտակ թելերը բացի ատամներից տարածւած են և մեր ամբողջ մարմնի մէջ, աչքում, ականջում, լեզւում և այսպէս մարմնի բոլոր մասերում և այդ բոլորը գնում են դէպի գլուխը, ուր ուղեղն է:

Եթէ չը լինէին այդ սպիտակ թելերը, չէին տեսնի մեր աչքերը, չէին լսի մեր ականջները, հոտ չէինք առնի, գուրկ կը լինէինք շօշափման ու շարժման գործունէութիւնից, չէինք զգայ ցաւը, ցուրտն ու տաքը ևն: Միթէ ես կարող էի գրել, չունենալով այդ թելերը, առանց որոց մարդը մեռելանման է:

Չմոռանամ ասել և այս, որ ատամի մէջ բացի նեարդից կամ վերև յիշած թելերից, կան և ուրիշ խողովակներ էլ, որոնցով հոսում է արիւնը և սնունդ տալիս ու ապրեցնում ատամին:

Շատ անգամ հիւանդները յամառ կերպով պնդում են, որ ատամի մէջը ճիճու կայ, որ իրենք կոտրել ու տեսել են. այս վերև ասածներս բոլորը նորահամար է, որ ցոյց տամ նոցա ասածի անհեթեթութիւնը. այն ճիճւենման սպիտակ թելը, որ տեսել են, ատամի նեարդն է:

Ատամի ցաւելու պատճառն այն է որ ատամի մի որ և է տեղում փոքրիկ կոտրուածքից բացւել է ատամի նեարդը, որը սիրում է լինել ազատ ու հանդարտ, չի դիմանում չնչին ճնշման ու սաստիկ ցաւում է:

Օրինակ, եթէ ատամի որևէ մասում սովորականից ատելի արիւն է ժողովւել, նեարդի տեղը նեղանում է, արիւնը սղմում է նրան, աղմուկ է բարձրանում գլխում, որովհետև սպիտակ թելի միջոցաւ բողբ է գնում դէպի գլխաւոր վարչութիւնը, այսինքն գլխի ուղեղը, ուր ինչպէս վերև ասացի, ժողովւում են ամէն կողմից սպիտակ թելերը-նեարդերը, իսկ ուղեղը յայտնում է ձեզ, որ այս ինչ տեղում անկանոնութիւն է տիրում, ցաւ կայ, հարկաւոր է շուտով կարգի բերել: Ամենագլխաւորը, ինչ հարկաւոր էր ձեզ գիտենալ ատամների կազմութեան մասին, համառօտ կերպով ասացի: Այժմ անցնենք այն հարցին, թէ ինչո՞ւ են փչանում ատամները ուտելիքի մնացորդից:

Պէտք է ասեմ ձեզ, որ ատամը բաղկացած է գլխաւորապէս կրային աղբրից, որոնք քիմիական օրէնքով թթւութիւնների մէջ լուծւում են. եթէ նրանց քցենք թթւութի մէջ, կը լուծւեն բոլոր ամուր մասերը և կը

մնան միայն փափուկները. իսկ մեր բերնում շատ յաճախ է գոյանում թթու լորձուկը, որի գլխավոր պատճառը առաջնների արանքը մնացած ուտելիքն է, նոր սպիրտակ հացը, որը աւելի հեշտութեամբ է մնում:

Թթու լորձուկը կարող է առաջանալ հիւանդ ստամոքսից նոյնպէս, բայց գլխավորապէս անմաքրութիւնից: Ուրեմն որքան փնասակար է երբ առամները՝ շնորհիւ վերը ասածներիս մշտապէս գտնուում են թթուութի մէջ: Եթէ առաջները ենթակայ են միայն թթուութի ազդեցութեան, փչանում է միայն ոսկրային մասը և դեռ հեռու է առամի նեարդը. երանի թէ միայն թթուութի լինէր, այն ժամանակ դժբաղդութիւնը այնքան էլ մեծ չէր լինի: Բայց դժբաղդաբար բերանում գտնուում են շատ մանր ուսող մարմնիկներ՝ հասարակ աչքին անտեսանելի. միայն գիտնականները հազար անգամ աւելի մեծացնող գործիքի միջոցով են տեսնում (մանրացոյց микроскопъ), իսկ մարմնիկները կոչւում են բակտերիաներ կամ մանրամարմնիկներ (микрорганизмы): Ձեզանից շատերը գուցէ ասեն. ահագին և ուժեղ մարդը ինչո՞ւ պիտի վախենայ այդ փոքրիկ մարմնիկների փնասից: Դժբաղդութիւնը նրանումն է, որ մենք նրանց հասարակ աչքով չենք տեսնում և կուլ ենք տալիս միլիօններով, որովհետեւ նրանք ամէն տեղ կան օդում, փողոցում, սենեակում, հագուստի վերայ կնն և զարմանալի կերպով շատ արագ էլ բազմանում են. Դեռ լաւ է, որ Նախախնամութիւնը մեր արեանը տուել է այնպիսի յատկութիւն, որ կարելիին չափ ոչնչացնում է նոցա և մեզ էլ՝ մաքրասիրութեան գիտակցութիւն, ապա թէ ոչ կորած էինք,

որովհետեւ այդ բակտերիա կոչւած մարմնիկները յատկապէս աճում ու բազմանում են կեղտոտութեան մէջ. եթէ չը լինէր արեան ոչնչացնող յատկութիւնը և մեր մաքրասիրութեան գիտակցութիւնը, ինչ կը լինէր մեր օրը, այն ժամանակ մարդիկ մի տարի էլ չէին ապրի, այնքան մեծ է նոցա փնասը:

Բացի ուրիշ շատ թթուութեան առաջացնողներից ահա այս բակտերիաներն են, որ առաջացնում են ամենափնասակար թթուութի, ուր արագ կերպով լուծւում է առամի ոսկրային մասը: Շատ դիւրին է իմանալ թէ առամը ենթարկւած է փնասակար թթուութի, թէ ոչ. վերցրէք հայելին և նայեցէք ձեր առաջներին. եթէ նկատէք սև կէտեր դեռ ևս ցաւ չը պատճառող, այդ ապացոյց է որ բակտերիաները գործում են ու քայքայում ձեր առամը, որ թէև այժմ չի անհանգստացնում, բայց մի քանի ամիս յետոյ դուք սև կէտեր ունեցող առամում ցաւեր կը զգաք. քաղցրը և սառը կազդի: Այդ արդէն ապացոյց է, որ բակտերիաները և թթուութի կերել են էմալը, անցել են առաջնոսկրին և սկսել են ուտել նորան. և որովհետեւ առամը սաստիկ չի ցաւում, առանձին ուշադրութեան չէք արժանացնում: Զի անցնել երկար ժամանակ և մի գեղեցիկ օր այդ նոյն առամը կը սկսի սաստիկ ցաւել, որը երկար չի տևի $\frac{1}{2}$ —1 ժամ ու կը դադարի մինչև երկուց և երեկոյեան կը նորոգւի աւելի ուժեղ կերպով:

Կը հարցնէք, ինչն է այդպիսի սարսափելի ցաւի պատճառը. ահա թէ ինչն է. նախ թթուութեան ազդեցութեամբ լուծուել է էմալը, ուր առաջացել է փոքրիկ խոռոչը, որը հետզհետէ մեծանում և լցւում է կե-

րակրի կամ ուտելիքի մնացորդներով, որին միախառնուում ու քայքայման գործը արագացնում են բակտերիաները և այդ փոքրիկ խոռոչում առաջանում է փսխակար թթւումը, որը արագ կերպով լուծում է էմալին, հասնում է ատամնոսկրին և որովհետեւ նա աւելի թոյլ է, արագ քայքայւում է, որից յետոյ արդէն անցնում է ատամի խիւսին-ատամի նեարդին. ուրեմն և այն ոսկրային ամուր ծածկոցը, որով ծածկւած էր ատամի խիւսը, այժմ արդէն չկայ. ատամի նեարդը շարունակ ճնշւում է կերակրի մնացորդից և գոգուում տաքից ու սառից, որին յաջորդում է ատամի խիւսի բորբոքումը. արեան մեծ քանակութիւն է ժողովւում ատամի փոքրիկ խոռոչը, որը ճնշում է նեարդին և սկսում է սարսափելի ցաւ. պարզ է, որ սարսափելի ցաւ լինում է միայն այն ժամանակ, երբ բակտերիաները սկսել են ուտել ատամի նեարդի կամ խիւսի թէկուզ փոքրիկ կտորը և եթէ դուք նորից առաջը չառնէք, այն ժամանակ բորբոքումը կը սաստկանայ, արիւնը աւելի կը շատանայ, ճնշումը կը մեծանայ և դուք կը չարչարէք ոչ միայն ժամերով, այլ օրերով. մի քանի գիշերներ անտանելի ցաւից նեղւելով երբ 10—15 օրից յետոյ ցաւը դադարում է ձեր արած զանազան ճարերի (կապլինների) շնորհիւ կամ ինքնիրեն, դուք ուրախանումէք, որ վերջապէս ազատւեցիք ցաւից. բայց սպասեցէք, դեռ ևս ուրախանալ շատ վաղ է. ցաւը դադարեց, որովհետեւ սաստիկ բորբոքումից կամ ձեր արած պառաւական ճարերից նեարդը մեռաւ և այնուհետեւ որպէս մեռած մարմին՝ ատամի ներսում սկսում է նեխել (հոտել-լուծւել). գործին նպաստելու համար արագ կերպով հաւաքւում են միլիօնաւոր բակտերիաներ.

այս վերջինները չեն լուծւում և սկսում են արմատապէս քայքայել ատամը: Երանի թէ նոքա բաւականանային միայն ատամը քայքայելով. ատամի արմատի նեղ խողովակով նոքա անցնում են ծնօտին: Պէտք է իմանաք, որ ատամի իւրաքանչիւր արմատը պատած է բարակ շապկով—վերնամաշկով (надкостница), որի միջոցաւ կատարւում է ատամի անդառութիւնը և այդ բակտերիաները նախ քան ծնօտին հասնելը, փչացնում են վերնամաշկը, նախապէս բորբոքելով նրան, որի ժամանակ լինում են սարսափելի ցաւեր մի քանի օր ու գիշեր շարունակ մինչև թշի ուռչելը:

Ատամների փչանալու գլխաւոր պատճառների և հիւանդութեան ընթացքի հետ ձեզ կարճառօտ կերպով ծանօթացրի: Բացատրել նոցա բոլոր հիւանդութիւնները մանրամասնութեամբ ձեզ համար աւելորդ է և անհետաքրքիր. ուստի ես սորանով բաւականանում եմ: Շատ անգամ հիւանդներս ինձ տուել են այս հարցը. ինչո՞ւ համար կան մարդիկ, որոնք շատ են ատամնա-ցաւ քաշում և կան որ քիչ:

Այդ հարցին պատասխանելու համար ինձանից առաջ գիտնականները մոտածել, փնտրել և գտել են որ ամէնից շատ փչանում են այն մարդկանց ատամները, որոնք աշխատում են քաղցրաւեներեաց խանութում (кондитерская), փոերում, հայելու և լուցկիի գործարաններում, նոյնպէս և յլի կանանց: Օդը, կլիման նոյնպէս ներգործում են ատամների վրայ. ժառանգականութիւնը ևս ունի նշանակութիւն. հիւանդ և թոյլ ատամներ ունեցող ծնողների որդիքը աւելի ենթակայ են ատամնացաւի, քան առողջներին:

Ուստի և ծնողները պարտական են լաւ հսկել երեխայոց բերանի և ատամների մաքրութեան վերայ, որ գոնէ այդ միջոցաւ երկարատե դարձնեն նոցա գոյութիւնը:

Մի մտածէք որ միևնոյն է, երեխաների ատամները պիտի վայր ընկնեն, ուրեմն և աւելորդ է հոգս ու բժշկութիւն: Զէ որ կաթնատամների տակ գտնուում են մշտականները և եթէ վերևում փշանան կաթնատամները, հիւանդութիւնը կանցնի մշտականներին և նոքա արդէն վատառողջ և քայքայման շուտ ենթարկւող դուրս կը գան: Երբ կաթնատամները արդէն դուրս են եկած, սկզբներում մայրերը պիտի իրենք լորձնոյժ և ատամների արանքից ատամնամաքրիչով հանեն ուսելիքի մնացորդը և հետզհետէ նոցա պէտք է սովորեցնել, որ իրենք մաքրեն, որը սովորութիւն կը գտնուայ իրենց ամբողջ կեանքում: Ինչպէս վերը ասացի, մայրերը չը պէտք է ասեն որ միևնոյն է, նոքա վայր են ընկնելու, որովհետև փշացած ատամներով երեխան չի կարող կանոնաւոր ծամել, ուրեմն և կանաւոր սնունդ չի ստանայ. ամուր բաներից խոյս տալով՝ ծնօտները և մկանները լաւ չեն զարգանում, ուրեմն և եթէ կաթնատամը սկսեց փշանալ, պէտք է բշկել և լցնել և թոյլ չտալ որ բոլորովին քայքայուի: Ես խորհուրդ չեմ տալ կաթնատամները հանել, որովհետև նախ լաւ չի ծամի կերակուրը և երկրորդ հանած տեղում լինող կը կոշտանայ և մշտական ատամի դուրս գալը կը դժարանայ:

Ձանազան հիւանդութիւնները նոյնպէս կարող են պատճառ լինել ատամների փշանալուն. օրինակ սա-

կաւարիւնութիւն, հարինք (тифъ), ծաղիկ, վատ ցաւ կամ սիֆիլիս ևլն:

Ասենք սիֆիլիսից մարդիկ կորցնում են ոչ միայն ատամները, այլ և քիթը. և որքան կարելի է, պէտք է խոյս տալ այդպիսի մարդկանցից, ապա թէ ոչ վարակւելը՝ իւր վատ հետևանքներով անխուսափելի է: Կայ և մի ուրիշ գլխաւոր և միևնոյն ժամանակ դատապարտելի պատճառ ատամների փշանալուն, դա ծուլութիւնն է: Այնպիսի կեղտոտութիւն, ինչպիսին շատ անգամ տեսնում ենք մարդկանց բերանում ատամների վերայ, եթէ ձեռքերի կամ երեսի վերայ տեսնենք, զգուանքով շուտ կը տանք երեսներս. այն ինչ բերանում՝ ոչինչ, որովհետև կեղտոտութիւնը ծածկում են շրթունքներով և անտեսանելի դարձնում դիմացնից:

Զընայելով բոլոր նախազգուշացումներին, դարձեալ բուրում է բերանից զգուելի գարշահոտութիւնը և շատ անգամ անտանելի դարձնում իւր ներկայութիւնը խօսակցի համար. ինքը զգում է այդ բոլորը, բայց ծուլութեան ոյժը սաստիկ է:

Սորանով բաւականանալով ատամի ցաւի և փշանալու մասին խօսել, խօսեմ ձեզ հետ մի քիչ էլ ատամների պահպանութեան կամ առողջապահութեան մասին:

ԱՏԱՄԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՌՈՂՋԱՆ ՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Ամենից առաջ պէտք է աշխատել, որ ատամները առողջ լինեն, որի համար անհրաժեշտ է յիշել և հարկաւոր դէպքում գործ ածել այն, ինչ ասացի ատամնացաւի պատճառների մասին, որոնցից գլխաւորը թթւութիւնն է: Իմանալով հիւանդութեան պատճառը, զըժար չէ առաջն առնել կամ մաքառել նրա դէմ. ուստի հարկաւոր է որ նախ՝ ոչնչացնենք բերանում եղած թթւութիւնը և երկրորդ՝ աշխատենք չթողնել որ նորը գոյանայ:

Ամենից առաջ հարկաւոր է դիմել մասնագէտ բժշկի (ատամնաբուժի), որ նա հեռացնի բոլոր փթած անպէտք ատամներն ու արմատները:

Որպէս զի չմոռանաք, ես նորից կրկնում եմ, որ քլասակար են ատամների համար թթւութիւնները, որի առաջանալուն շատ նպաստում է և ուտելիքի ատամների արանքում մնալը, մանաւանդ հացը: Լաւ է ուտել հին հաց և ատամներով լաւ ծամել. այդ պէտք է անեն մանաւանդ երեխայք, որովհետեւ կազմաւորել այն մասը, որը աշխատում է, աւելի ամրանում է, ուստի և փոքր հասակից պէտք սովորութիւն դարձնել լաւ ծամել՝ «փոքր հասակում ձեռք բերածը ծերութեան ժամանակ պէտք կը գայ»: Թէ աշխատանքը ամրացնում է գործող անդամին, պարզ է. օրինակ դարբինը, նրա ձեռքերի մկանները երկաթի պէս պինդ են. ինչո՞ւ, որով-

կով և վարակելով բորբոքումն առաջացնում, որովհետեւ ոմկրամաշկումն էլ կան նեարդեր, սղմում են և սկըսում է նոր ցաւ առաջանից աւելի սաստիկ. այն ժամանակ արդէն զրութիւնը վատ է. այժմ արդէն պառաւների, դեղատների և ֆելդերների ճարերն ու կապլիները չեն օգնում: Այդպիսի ատամը ոչ միայն դեղագործն ու ֆելդերը, այլ նոյն իսկ շատ բժշկ յանձն չի առնի բժշկել: Իսկ եթէ յանձն առնի, թանկ կը նըստի, որովհետեւ այդպիսի ատամը բժշկելու համար 3—5 շաբաթ է հարկաւոր: Իսկ ի դուր տեղը հանել մեղք է և ափսոս, որովհետեւ եթէ իւրաքանչիւր ցաւող ատամ հանել, այն ժամանակ մի քանի տարուց յետոյ անատամ կարելի է մնալ. իսկ մարդը առանց ատամի նոյն է, ինչ որ ջրաղացը առանց քարի: Առանց ատամի վատ է ոչ միայն բերնի համար, այլև ատամոքսի և ամբողջ մարմնի. որովհետեւ երբ ատամ չկայ հեշտութեամբ կարելի է ստամոքսի խանգարում և հիւանդութիւն ստանալ, որով մարդը զրկւում է կանոնաւոր սննդառութիւնից. այդ տեսակէտից մարդն ու կենդանին մէկ են, առանց սննդի կորած են: Ուստի եւ անհրաժեշտ է որ մտդ ամէն բանից բանի գնահատի իւր ասամները եւ լաւ պահի:


Ձեզանից շատերը կասեն, որ բանւորը ժամանակ ունի հաց ուտելու, որ ատամների մասին հոգայ և հարկաւոր դէպքում բժշկի մօտ գնայ. ո՞վ է ասում ժամանակ չկայ. իսկ երբ օր ու գիշեր սաստիկ ցաւում է, ի՞նչ շատ անգամ օրերով բան ու գործ թողնում և զրկւում է օգուտից: Աւելի լաւ չի՞ լինի, որ չը թողնուի այն աստիճան փչանայ, որ կարիք լինի երկար բժշկութեան: Աւելի նպատակայարմար չէ՞ լցնել այն ժամանակ, երբ

միայն ատամնոսկրն է փնասւած, նեարդը առողջ է և հնարաւոր է մի օրում առանց երկար ու բարակ բժշկութեան մաքրել ու լցնել:

Այն, ինչ անհրաժեշտ էր և կարևոր, ասացի և վանքամասն բացատրութեանց կարիք չկայ:

Ձեզանից շատերը կը դարմանան նոյն խել, որ ես չեմ նշանակում որևէ լաւ կապլի ատամների համար: Ես նորից կրկնում եմ, որ հակառակ եմ որևէ կապլի նշանակելուն և խորհուրդ տալ չեմ կարող կապլիներով հանդարտեցնել ատամների ցաւը, չնայելով որ դժբանից էլ հեշտ բան չկայ: Ես չեմ նշանակում, որովհետև նոցա գործածութեան մէջ փնասից բացի օգուտ չեմ տեսնում: Ասածս շատ պարզ է, ես չեմ մոլորեցնի ձեզ զանազան գիտնական խօսքերով և ապացոյցներով. հասարակ, պարզ և կտրական կերպով ասում եմ, որ կապլիները աւելի փշայնում են ատամները՝ երբ չպէտք լցնել: Որովհետև այդ կաթիլները կամ ձարերը այրելով անզգայացնում են ատամին և հարկադրում լռել ու չը գանգատուել գլխաւոր վարչութեան-գլխի ուղեղին, որ շատ փնաս է ատամի համար. այդպիսով խիւսը որպէս մեռած մարմին շարունակում է փթել և հետզհետէ քայքայւել, որի հետ զուգընթացաբար փթում և կոտրատւում է ատամի ամուր մասը:

Ես խորհուրդ չեմ տալ ձեզ ոչ մի կաթիլ կապլի գործածել, որպէս զի խիստ ցաւը հարկադրի դիմել բժշկի կանոնաւոր բժշկելու: Ես չեմ տալ, որով ատամը պահպանած կը մնայ, քայքայումից և յոյս ունեմ աւելի փնասիւ կլինէք: Ձեզանից, քան եթէ կապլինէր նշանակէի:



ՀԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

Ատամներ և նոցա առողջապահութիւնը 1899 թ. դ. 20 է.

Ատամներ, նոցա ցաւելու պատճառներն և այլն 1907 թ. դ. 8 է.



ԳԻՆՆԷ Տ ԿՈՊ.

Դիմել Զրивань, Зубному врачу
М. М. Марнарьянцъ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0071267

